պէս նաև բորբ այն ծախսուած գումարներու մասին սրանց համար  
ստացապիրներ զայտութիւն չունեն:

6.— Նախարար եւանդուու օւանձնածուղովոյ իր անդամներէն  
ունանց միջացաւ վատուներ և նմանեալ զումարները,

ա) 14 Մարտի 1920 թ. 300 լէլա վերարուած է ուն և Ծիրին-  
եանի և 400 լէլա Ռուբէն Հարաբետ մեանի իրբե նուէր

բ) 5 Նոյեմբեր 1922ին Տէր Արդդիս Դարբարիանի միջացա-  
կար փեսին զարապկած 0. Նախարարի նուիրուած 1200 լէլա,

գ) 1923ին իրեւ թէ 875 լէլաւ նաւիրուած զալթական քա-  
հանաներու, առանց վերջիններէն հարկ եղած ընկալագիրը ստա-  
նալու.

ի) Իարծներով այս գումարները պատասխանաւու. խորհրդին  
կողմէ ըստ օրինի չն' ուրուած համեւերար ստուգիլու է, թէ ոչ  
է բաց թողին այդ գումարները և ըստ այնու ճշվելու է պատա-  
խանաւուու. թիւնը.

7.— Թաղաքիս Ռումիա լար կրուսակցութեան պիտանին կազմէ  
Անականի հայկական ընթերցարունի գոյքերու և զիրքերու խրացման  
համար մեզուուր կը համարիմ նուօրոք աղօրինի թաղականութեան  
անդամները, որուց յանձնաներ են զանոնք (լոյցերը և գրքերը) և  
իշանի համաձաներ. են օր մնան իրը սեփականութիւն յիշեալ կու-  
սակցութեան ամրամբը. Այս պարագային քաղաքացիական և գրէ-  
ական պատասխանն առ ու թիւն կայ:

8.— Բացարութիւն ու գույքը է պահանջել Պ. Խաչիկ Միջայէլ-  
եանէ թէ ինչ բած է ուն Սահակ Մարտիրոսանի ՅԵ հնչուն սո-  
կեղրամմերը, ի պահ թողուած թաղականութեան սնառվեր, յիշմալ  
զանձնապահի դրասոր պատասխանը ստանալէ վերջ ճգիւլ պատա-  
խանաւուու. թիւնը:

9.— Քննիչ Յանձնախումբը իր տեղեկագրին մէջ ոչ մէկ լիշտակութիւն կընէ եկեղեցոյ գոյքառումարին (ինվենտար) մասին, մինչդեռ հ սարակութեան մէջ բաւական խօսուած է անոր վրայ։ Մանրազնին քննութենէ մը վերջ, եթէ հաստատի ո ևէ դոյքի պակաս (ըստ հին զոյքառումարի) քրէական պատասխանատութեան ենթարկել եկեղեցոյ գոյքառանը։

10.— Տեղեկագրին մէջ ցոյց արուած է նոր Սուանդան Յանձնուած (բանկալի յանձնուումին առթի) եկեղեցական մոմերու հայուեցուցակը, առանց սակայն բառ մը ըսելու նաև որդ թաղականութեան բանկալի մուտքի և ելքի գործառնութեանց մասին։ Նկատի առնելու, որ բանկալի հասոյթը ամենակարեւոր գրիչը կը ներկայացնէ, անհրաժեշտ է, որ ատենազիր մը կոզմուի հաստատելու համար բանկալի ելեւմուտքի վիճակը վերայիշեալ ժամանակամիջոցի ընթացքին, որմէ յետոյ պատասխանատութեան ենթարկել նոյն բանկալը վարողները։

Միշտ պատրաստ բերանացի կերպով տալու լրացուցիչ բացուրութիւններ։

1 Մարտ 1924

Վարդակական

Յառաջի փաստաբան  
Ա. Գրիգորյան

### ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

Ա. Սարգիս եկեղեցւոյ անօրթեուն ու գօյթեռւն որոնց Եռանդամ Յանձնախումբիս յանձնուած են նախորդ թաղականութեան կօյմէ, այդ առթիւ կազմուած մասնաւոր Յանձնախումբի մը քննութեան ենթարկուելէ եւ բաղդատուելէ յետոյ նախապէս գոյքառումարին մէջ արձանագրուածներու նետ, նամակայն ստորեւ նշանակուած ատենազրի պարունակութեան։

### ԱՏԵՆԱԳՐ

Այսօր 1924 Յունուար 30 ստորագրեալներս, Փիլիպոս Հայանեան անդամ Անրիայ Եռանդամ Յանձնախումբին, Աւեսիս Մելիտոննեան անդամ նախակին թաղականութեան Դ. Դուտուլեան Տեօտիան Ազգ. երկու վարժարանի, Մկրտիչ Ղազարեան եկեղեցւոյ դուստր, աւարտեցիմբ Եռանդամ Յանձնախումբի կողմէ մազի յանձնուած պաշտօնը եւ Ա. Սարգիս եկեղեցւոյ գոյքառ քննելով գտանք ստորեւ արձանագրուածները, պակաս կամ աւելի թաղդատմամբ նախորդ թաղականութեամց օրով կազմուած գոյքառումարին նետ։

ԳՈՅՔԵՐՈՒ ՑԱՆԿ

	ՀԱՅ	ՀԱՅ
	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՎԱՐԱԿԱՆ ԴՐԱՄԱԴՐԱՄ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՎԱՐԱԿԱՆ ԴՐԱՄԱԴՐԱՄ
1. Ասպաւարաներ	8	7
2. Շուրջառներ	29	25
3. Շուրջառ հուրէ նոր	—	1
4. Վակասներ	7	7
5. Փոք ուրարներ	30	24
6. Բազգաններ	19	19
7. Բազգաններ նոր	—	3
8. Ուրարներ	11	10
9. Կամարներ (գօտի)	6	6
10. Հողաթափներ	4	4
11. Մրիլ գործածելի և անգործածելի	35	27
12. Բենի մնձ վարագոյրներ	8	8
13. Փոքը վարագոյրներ	22	18
14. Միջին ծածկոցներ	48	45
15. Խորաններու առջեւի ծածկոցներ	16	24
16. Հաղորդութեան բռնիչ	7	7
17. Աւետարանի բռնիչ	28	28
18. Աւետարանի բռնիչ նոր	—	17
19. Մկրտութեան աւազանի վարագոյր	5	5
20. Պահարանի վարագոյր	12	12
21. Մեղանի, ամեսարանի և գոտը պրա- կարի ծածկոցներ զործածելի և անգործածելի	24	8
22. Ունալու այի գենջակ	2	2
23. Զաներու ծածկոց	3	—
24. Կիսածածկոցներ փոքը ինորաններու	25	25
25. Միծ խորանի ամգիռնի ծածկոցներ	2	2
26. Մածկոց եղերքը կապոյտ ծոպերով մետաքս	1	1
27. Կարմիր չուխա 4 մեթր	1	—
28. Ճերմակ շղարչ	94	—
29. Զանազան գոյներով թաշկինակ	16	—
30. Ճերմակ մետաքսէ թոշկինակ	34	—
31. Դագաղի մեւ ծածկոց	1	—
32. Աև շուրջառ ճերմակ ասոլառով եղերուած	2	—
33. Աև շապիկ մեւ փիլոխն և ճերմակ	1	1
34. Աև շապիկ փոքը տղաքներու	8	8
Շոպիկ պատարագիչ քննիլ գործ. անգործ.	42	12

35. Դադաղի ծածկոց սև դեղին կլապ-		
ապավով եզերուած	1	1
36. Սև փելեռինով ճերմակ շապիկներ	17	17
37. Գրքակալի շապիկներ	5	4
38. Խաչի բռնիշներ	12	11
39. Արծաթեայ անօթներ	22	22
40. Խաչ ճաճանչաւոր խաչելութեան նոր	—	1
41. Խաչ ձեռաց Խաչելութեան պատկերով	—	1
մէկ կողմը կարմիր քար նոր	—	1
42. Փայտէ կոթով ձեռաց խաչ	—	1
43. Ակիչ	3	3
44. Քլոց	2	1
45. Կանթեղ	9	9
46. Կանթեղ նոր	—	1
47. Արծաթապատ Աւետարան	12	12
48. Արծաթեայ զանազան անօթներ	10	10
49. Արծաթեայ սրբառուի	8	8
50. Աշտանակներ զոյդ	46	28
51. Նիքելէ աշտանակ	10	6
52. Մեծ կաթսոյ պղինձէ	2	—
53. Միւռն թափի կաթսոյ	1	—
54. ՝ ՝ ՝	1	1
55. Կոնք ուղղործածելի	1	—
57. Շերիփ պղինձէ	1	—
58. Պղինձէ կոնք պատարագիչ քնչ.	1	—
59. Դեղին թիթեղէ մոմակալներ զոյդ	5	5
60. Դեղին թիթեղէ կանթեղ զոյդ մէտ	1	1
61. Եռուանիք մոմակալ զոյդ	1	1
62. Զոյդ մը կերոն	1	1
63. Կերոն փայտեայ ձողերով	1	1
64. Ա. Կաղորդութեան վեցանկիւն գմբե-		
թաւոր պահարան Աւագ խորանին ետեւ կախուած	1	1
65. Թիթեղէ շրջանակով կոտրած ժամացոյց	1	1
66. Գունատուր պնտկ Խաչվերացի	1	1
67. Ճերմակ թիթեղէ պնտակներ	8	6
68. Հաւկթածե պնտակներ ծաղկեզարդ	4	4
69. Թիթեղէ կանթեղ Աւագ խոր. ետեւ կախուած	—	1
70. Զան:	5	4
71. Արբաց պատկերներ	28	28
72. ՝ ՝	—	1
73. Սողիսկալներ զոյդ	3	3
74. Գորդ	6	4
75. Քրլիմ	24	6
76. Գրքակալ	6	6
77. Ճալոց գիրք	2	1
78. Շարական	2	2

79.	<i>Մեծ ժամագիրք</i>	1	1
80.	<i>Փոքր ժամագիրք</i>	2	2
81.	<i>Տօնակարդ</i>	1	1
82.	<i>Տօնացոյց</i>	2	2
83.	<i>Տաղաբան</i>	1	1
84.	<i>Մայր մաշխոց</i>	1	1
85.	<i>Փոքր Մաշխոց</i>	1	1
86.	<i>Նարեկ</i>	1	1
87.	<i>Սաղմոս</i>	3	3
88.	<i>Նարեկ քարթոնակազմ</i>	1	1
89.	<i>Գործք առաքելոց</i>	1	1
90.	<i>Լորենդատեար</i>	2	2
91.	<i>Աւետարան լաթակազմ</i>	1	1
92.	<i>Ժամագիրք ատենի</i>	—	1
93.	<i>Մաշխոց (2 հատոր)</i>	—	<i>միացած</i> 1
94.	<i>Յենարաբանով նստարան</i>	28	20
95.	<i>Առանց յենարանի նստարան</i>	9	7
96.	<i>Դպրաց շապիկներ</i>	91	64
97.	<i>Մաղկեպսակ</i>	2	2

### ՈՍԿԵՂԷՆ ՈՒ ԱՐԾԱԲԵԱՑ ԻՐԵՐԻ\*

<i>Բուղիյէ սասնոց ոսկի</i>	1	—
<i>Արծաթեայ կամ պաֆօնէ սիրտ</i>	15	6
<i>Արծաթեան դէմք</i>	1	—
<i>Արծաթեայ կամ պաֆօնէ գլուխ</i>	2	2
<i>Արծաթեայ կամ պաֆօնէ աչք</i>	4	4
»     »     »     »     » <i>նոր</i>	—	2
<i>Արծաթեայ կամ պաֆօնէ ստք</i>	1	1
»     »     »     »     » <i>նոր</i>	—	4
<i>Արծաթեայ թէ</i>	1	1
<i>Արծաթեաչ կամ պաֆօնէ մարմին</i>	4	4
»     »     »     »     » <i>նոր</i>	—	4

\* Ռսկեղէն ու արծաթեայ իրերու մասին յանձնախումբս ան՝ հրաժեշտ կը դանայ անսոնց մասնագէտ ոսկերիչներու քննութեան ենիսարկուիլը, կարենալ հաստատելու համար թէ որոնք մաքուր արծաթէ են, որոնք պափօնէ, որոնք կեղծ և որոնք իսկական ոսկին են:

Արծաթեայ մանկիկ	4	4
»      »	—	2
Արծաթեայ կամ պաֆոնէ ձեռք	1	1
»      »      »      »	—	4
Արծաթեայ ժամացոյց	1	—
Արծաթեայ փոքր խաչ պատկերներու վրայ	2	2
Ոսկի ող զոյզ	2	2
Արծաթեայ ող	2	—
Մասանի	1	1
Ոսկեղօծ կլոթակ	1	1
Տաւնոց թրքական ոսկի	1	—
Տուղլէ խաչ	1	1
Տաւնոց ոսկի	18	18
Հինգնոց ոսկի.	10	10
Քսաննոց ոսկի	7	7
»      »	—	1
Երեքնոց ոսկի	1	1
Կէանոց ոսկի մահմուտիէ	4	4
Թառորդ մահմուտիէ	1	1
Թառորդ Օամ. ոսկի	1	1
80 լէվա արժող թրքական ոսկի	1	1
Թրքական բուղլիյէ երկու արծաթեայ պատկերով	1	1
Արծաթեայ դրամ թրքական	2	—
Արծաթեայ զրուշ թրքական (քառորդ մը)	1	1
Արծաթեայ դրամ մէկ լէվոնոց	4	—
Արծաթապատ Նարեկ	1	1
Ոսկեղօծ աստղ	1	1
Պուլկարական կէս լէվա արծաթ	1	1
»      »      »      »	—	1
Ռումանական կէս լէվա արծաթ	1½	1
Գունաւոր անձեռոց	3	3
Աւազանի վարագոյր	1	1
Թիւլ Ս. Սարգիսի առջև	1	1
Արծաթէ տուփ	1	1
»      »	—	1
Արծաթեայ զրամ Ն լէվանոց	—	1

ԽԱՐՀՐԴԱՐԱՆԻ ՄԷջ ԳՏՆՈՒԱՆ ԳՈՅՔԵՐ

- 1 Վառարան 7 խողովակներով  
1 Ժամացոյց պատի կլոր  
1 Պարոմէթր  
1 Սեղան երկար և վրայի մած գործածուած մուշամազ  
1 Սեղան պղտիկ  
1 Թիկնաթոռ  
8 Աթոռ  
1 Դրամարիզ տակի սնառուկով  
2 Դաշտան  
1 Խամակի բրէս դարակով  
2 Կտորէ զգեստի կախակալ  
2 Պատկեր լրջանակներու մէջ առնուած  
1 Պատի փոքր ջերմաչափ  
3 Վարագոյր 3 վարագոյրներու 3 քուրնիզով  
2 Կաղամար  
1 Նամակներ եակող գործեք  
2 Գրչակալ  
2 Մերւն թուղթի գործեք  
1 Զանգակ սեղանի  
1 Զուրի չիւ և մէկ գաւաթ տակի պնակներով  
1 Կրակի պղտիկ բան  
1 Փայտ դնելիք սնառուկ թիթեղեայ  
1 Թքաման  
1 Թուղթի կողով  
1 Աման ջուրի նամակի փրէսի համար

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ ԳԱԲՐԻԵԼ ԹԱԿՈԹԵԱՆԻ  
ՑԱՆՉՆՈՒԱՆ ԳՈՅՔԵՐԸ

1 Վառարան, 7 խողովակ, 1 խողովակ անկիրնի,  
4 բազմոց քանափէ, 1 սեղան, 1 աշտանակ, 1 բրիչ  
1 թի, 1 բան, 1 դոյլ չուանով, 5ուկէս մէթր չուան,  
1 արմուղ (պէտ), 2 ցնցուղ ջուրի:

Նկեղեցապատկան գոյթերը բնեող  
մասնախումբի անդամներ՝

Փ. ՀԱԼԱՃԵԱՆ Գ. ԳՈՒՑՈՒԵԱՆ  
ՄԿՐՏԻՉ ՂԱԶԱՐԵԱՆ

Ելեւմտական նախարարութեան կողմէ 1922 Օգոստին դրկուած բնիշին տեղեկագիրը նախորդութաղականութեան մասին:

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ (ԱԿՏԵ)

«1922 Օգոստոս 28 էն մինչև 7 Մեպտ. ստորև ստորագրուած ելեւմտական քննիչ, նիրօլա Կրուէֆ, ներկայութեան Դաղար Թամարիզեանի և Ռուրէն Միհրանիանի, կատարեց քննութիւն Հայոց Թաղական խորհրդի գանձաւուն Խաչիկ Միհրանի և գտաւ հետեւելլը»

«Վառնայի Հայոց Թաղական խորհրդի հաշիւները ցարդ չեն ենթարկուած ուելից ելեւմտական քննութեան: Ամեն 3 և 6 ամիսը անգամ մը կը կատարուի եղեր ներքին քննութիւն մասնադր քննիչ յանձնաբառումբ մը կողմէ ընտրուած Թաղական խորհրդոյ անդամներուն մէջէն, որոնց նոյն մարմոյ գանձապահը քննիչ կուռայ իր հայիւները»

«1919 Դեկտ. 1-ին, (երբու Խաչիկ Միհրայիեան նախնձնած Կանձնապահութեան պատօնը), Մինչև 1 Դեկտ. 1921 Քամանակ կամիշոցի մը համար համուեցնուութիւն կարիք է ո կատարի, որովհետեւ կրամուտքի (սացուած եւ ծախսուած գումարիներու) ՓԱՍՏԱԹԱՂԹԵՐ ԴՈՅՈՒԹԻՒՆ, ԶՈՒՆԵՒՆ, հասեւաբար համուեցնուութիւն կատարուեցաւ, 1 Դեկտեմբեր 1921 էն մինչև 21 Մարտ, 1922 Քամանակամիշոցի համար» — »

Սոյն յառաջարանեն յեռյ կու զան հաօխւներու մանեստառ նուրիւնը ու տեղեկագրին մէջ նեզմինեւ կը խօսուի»

1. «Բննութեան միշոցին Թաղականութեան գանձաւումին մէջ գումարը՝ 1625.15 լէվա բացի մասին»

2. «Նախկին աղջկանց վարժարանը առանց աճուրդից իբեք ապքատ ընտանիքի մը» և «Ըստմովաբներու իբր ընթերցարան յատկացուած ըլլալու մասին (Չնչին վարձելով մը)»

3. «Թաղականութեան արիստին մէջ գումարը՝ շատ մը մնաց տաթուղթերու վրայ ընաւ և կամ պակաս դրաշւաթուղթի վակացուած և հետեւաբար գանձապահը տուզանքի հետեկայ, ըլլալու մասին» (2476 60 լէվա):

4. «Թաղականութեան մը համար անհրաժեշտ տպարներու մէկ մասին զգոյութեան և դոյութիւն ունեցողներուն ալ անկանոնութեան և տոմարներուն մէջ դտնուած շտա մը ոչնչացուած ու չակուած դրիչներու չլվաւերացուած ըլլալու մասին»:

5. «Կարդ մը ստացուած գումարներու փոխարէն ստացագիրներ տըռուած չըլլալուն մասին»:

Սոյն արձանագրին տակը ստորագրած են՝ Ելեւմտական բնիշին Ն. ԿըՈՒԻԵԹ, Թաղական խօհեղոյ անհնապահ Ա. ԱԲԴԱԼԻԵԱՆ, Թաղ. խօհեղոյ գանձապահ Ա. Միհրան Եկեւան:

Նախորդ քաղականութեան նախապէս նրածարած  
անդամներուն կարծիքը իրենց մնացեալ պատօնակիցնե-  
րուն մասին:

**Պատուարժամ**

**Եռամդամ Յանձնաժողով**

**«Ա. Սարգիս եկեղեցւոյ»**

**ԱԱՏ**

Ի պատասխան Ձեր հրաւէնին՝ իբրև նախկին թա-  
զականութեան կազմին մասնակցողներ, ներկայանալու  
ժեղարք Յիշ կէս որէ յետոյ Ազգային Խորհրդարան, ուր  
լուրջ նախորդ թաղականութեան և Եռանդամին գոր-  
ծունէութիւնը քննող յանձնախումբին տեղեկագիրը: Հարկ  
եղած բացատրութիւնները տանք, պատիւ ունինք իմա-  
ցնելու Ձեզ թէ՛ թէ ստորագրեալներս, որոշ ժամանա-  
կամիջոցներու մէջ մասնակցած ենք խնդրոյ առարկայ  
թաղականութեան կազմին, սակայն նոյն մարմոյ մաս  
կազմող որոշ խմբակի մը կողմէ գործուած ապօրինու-  
թիւններու տակաւին ժամանակին չ'հանդուրժելով, բո-  
ղոքելով հրաժարած ենք այդ մտրմոյ կազմէն, հետեւա-  
րար գործուած ապօրինութեանց պատասխանատուութիւնն  
այ կը ծանրանայ անոնց վրայ (նոյն խրբակին) որոնք  
մինչեւ վերջը չ'անսալով մեր և ժողովուրդի կողմէ եղած  
բողոքներուն, ցյաւիտեանս ուղեցին կտռչած մնալ իրենց  
աթոռներուն, որով պահանջուած բացատրութիւններն ալ  
այժմ իրենք պէտք է տան:

**Յարգանոք**

Վառնա 2 Փետր. 1924

Փ. ՀԱԱԾԵԱՆ Տ. ԹԻՒՐԲՃԵԱՆ

ՄԱՆՈՒ. Նաև նոյնանման յայտարարութիւններ, բերանացի ըրած  
են Եռանդամին, նախորդ թաղականութեան կազմին որոշ ժամա-  
նակներու մէջ մասնակցելով և սակայն չի հանգուրժելով իրենց  
պաշտօնակիցներուն կողմէ եղած ապօրինութիւններուն, հրաժարած  
հետեւալ ազգայինները՝ Պ. Բարօնդ Թորոսիան և Ղազարոս  
Թամբրզեան, իսկ նոյն թաղականութեան Ատենապետ Պ.  
Կարապետ Աճէմեանի կողմէ գրաւոր (տես էջ 22 իր նամակը)

արձակ մասնակիցներ ու պատվագությունը ու արժապահությունը

### ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒ ԲԱՍՏԵՐ

Վազնայի Արքայի Ապագիս եկեղեցւոյ նախարար բարձրականութեան ժամանակաշրջանու (30 XI 1919—1 X 1923 շրջանին): Բառացի բայական ու նիրակարան գործունելու թեան մասին, բայ-

ու ած նոյն Թաղականութեան արխիթէն:

Հաստ յաւ հանօթ և Վատնայի հոյ հասարակութեան թէ ինչ-  
որէ նախական Թագուկանութեանը իր կաղմբն մեծամանութեանը  
կորսն զնելով քայլ խոյ (գործուած ապօրինութիւններու դիմ բա-  
ղուցնոյ Պ. Արքայի Անձնանի, Բարսեղ Պոռոսեանի, Փիլիպոս  
Հալանեանի, Տիրան Քիւրենեանի և օճանդակ անդամ Ղազարոս  
Թամիթզեանի հրամագումարի) ու զեց կառչած մար իր աթոռնե-  
րուն, կառա լարու թեան տաշն, բրբե Խռանդամ Յանձնածողով,  
իսկ Պատրիարքարանի տաշն իրբե օրինաւոր Թաղական Կարիւր  
նարկարաց ներկի ինքնինքի:

Ստորգուոծ այս կացութեան տաջեւ, որմէ մեծապէս կը տուա-  
ժէին Ազգային շահները, եկեղեցին ու նամանաւանդ Ալզ, վար-  
ժարանը սրբ վափառելու ասամճանին հասցուցած էին, Վառնայի  
Հոյ հասարակութեանը գունից դրաւութ թէ ընթանացի բողոքեց վերջ  
բայն համար մյու ապօրէն մարմնի զոյտթեան և անոր կողմէ  
դործուած, կամայականութեանց բայց գքբայտարար եղած բայլոր  
արդու բայց ի բազմին ըր ու գումանին ըր նոր մուրմույ մը ընտրու ի բայ-  
թեան համար, անհանե անք մասցին և նոյնիսկ արհամարտեցան չեատ  
նախորդ Թաղականութեան կողմէ:

Ստորև կը ներկայացնենք (Թաղական արխիթէն քաղելով) այս  
այս առթիւ տեղուոյ Աւագերեց և Առաջնորդ. Փօխանորդ Ցէր  
Մարգիս Հօր Գիմանմերէն մին, նոյն մարմնայ հաւաքական հրա-  
մարականը պահանջող, զոր մնան նկատի չէ առնուած, նոյնիսկ առա-  
մարհարուած, ոչ ժաղովի դրուած և ոչ ալ մակաղրուած է նոխառ զայ  
թաղականութեան կողմէ:

ԱՄԳԻՒ ԱԲԴ 44. ՂԱՐԻՊԱՆ

Առաջ. Փօխանորդ Հայոց

ՊՈՒՆԿԱՐԻՈՑ

ՎԱՐՆԱ

### ՊԱՏՈՒԱՐՃԱՆ ԹԱՂԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԹԻՒ 470

8 Մայիս 1923

### ՑՈՐԴՈՅ ԱՌԴԱՄՈՑ

ԱԾ

«Օքնեալ մազովդուանս կողմանէ ինձ մասուցուած է հանունուա-  
րադ բութիւն մը, որով իրբե խաղաղութեան պահունեայ և նաւուրա-  
խաղան իրաւունք կունենամ Պատ. Խորհրդոյդ հաւաքական հրա-

ժարականը սուհանջելու հարկ և զած կարգադրութիւնն ընկելու համար:

Յուսով եմ թէ պիտի հաճիք հայրական ուսանջիս զոհացում տալու ազնուութիւնն ունենաւ և ընդունիլ փրկչուանդ սիրոյ ողջոյնս:

Նահագան Թաղական Խորհրդայ և միշտ բարեմողզող  
(սար.) ՍԱՐԴԻԿԱ Ա. ՔՃՆՅ ԴԱՐՊԱՎԵԱՆ  
(Կնիք)

Տէք Սարդիս Հօր սոյն զրութիւնը անպատճառիսի մնաէք յեսոյ ինք քանից ալ զբառոր հրատիրած է Նախ, Թաղականութիւնը մոզովի պահանջելու համար իրենցամէ Թաղականութիւնն հաւաքական հրաժարականը սրուն (հրաէքին զիմացը) հանեւեալ ձեւով պատասխանած են:

«Հետաքրդիր չեմ» (սար.) Խաչիկ Միքայէլեան  
«Իշխմ վար կէլմէլէնչյիմ» Հ. Կար. Պաշտուեան (օժ. անդամ)  
«Ղարեւոր չեմ սեղեր զալու» Սակեվան Արդարեան »  
«Գործ սւնիմ կարող չեմզալ» Աւեաիր Մելիսոննեան  
«Տկար եմ չեմ կարող զալ» Աւետիր Մանուկիս:

Նախորդ Թաղականութիւնը չի քաշուեցաւ արհամարելու նոյնիսկ վասնայի նախանդային վարչութեան իրենց ուղարկ 6409 թիւ 20 Սեպտեմբեր պաշտօնագիրը՝ «բոլի Պր. Նահանդապեալ համաձայն նախարարութեան 352)2070 թիւ հրամանին ու պաշտօնագրին կը հրամայէք Թաղականագուն զործերու ամիջական յանձնումը նորընասիք Սահնդամ Յանձնաժողովիս» (աղկացած Տ. Տ. Միքան Զգօնեանէ, Փիլիպոս Հալանեանէ և Յովան Աճէմեանէ); Սակայն նախիին Եռանդամը թէ Թաղականութիւնը, փոխանակ ամիջապէս այդ հրամանը զործադրելու, այնքան սերուորէն կառչած էին իրենց աթոռներուն, որ Պալկար պաշտօնուեան շրջանակներու մօտ դուռ չի մնաց որ չի բաղինէին, շիոթեցնելու համար կառավարական շրջանակները, կանոյ չառնելու զրդարաւութիւններու առջև, նոյն իսկ նոր Եռանդամը ներկայացնելով յոչս կառավարութեան իրքն անվասնելի և բովունիս աւրերեկ բաղկացած:

Ահա այսպէս նախորդ Թաղականութեան անդամները քաղաքացիական պարտականութեան նշոյն իսկ յանհցան և վոխանակ անմիջապէս յանձնելու տասնեակ օրեր ձեզեցին, քանից իսութելով նաև Պր. Նահանդապեալը՝ որուն սաբովման տակ հաղիւ 1923 Հոկտ. 1ին կառարեցին յանձնումը:

Եռանդամ Յանձնացողուխ ընդպատճ նըթալու համար վասնայի հայ հասարակութեան ստուար մասին ցանկութեան ու թախանցանքին ստանցնեց իրեն վատանաւած պաշտօնը՝ օժանդակ առնելով իրեն համեստակ ազգայինները Տ. Տ. Ատեփան Գանապեան Դարպատս Թահամթեան, Եղարտիկ Գարպագեան, Աստոտ ը Համբիկ:

եան, Աւաքել Խաթենէսեան և Խաչիկ Գանթարճեան։ Սոյն կտղմը՝ Պողկարիս Առաջնորդ Տէր Սարգիս Հօր առաջարկութեամբ ամիջապէս վասերացուեցաւ նաև Ազգ։ Պատրիարքաւանի կողմէ իրը, Առժամեայ Թաղական Խորհուրդ Վասնալի Սբ. Սարգիս եկեղեցւոյ։

Նիւթական վիճակ

Թէ ի՞նչ անմիտիթար վիճակի մէջ յանձնուեցաւ մեղ թաղականութեան գործերը և ի՞նչ զժուարին կացութեան մէջ զտնուեցաւ նաև ամիսնամատուղարվ իր պաշտօնավարութեան առաջին ամիսները, անա շատ ամփափ մէկ պատուերը նիւնական վիճակին զոր առորե կը ներկայացնենք, քաղելով թաղականութեան տումարներէն։

1923 Հոկտ. 1ին Նախ. Թաղական Խորհուրդը մեղ յանձնեց՝

1. Գանձին մէջ պատրաստ գրամ միայն 576.10 լէվա  
2. Բանկալին մէջ պատրաստ մոմ և վառած մոմի ծայրեր  
8163.45 լէվակի արժողութեամբ։

Որոնց փոխարքն սակայն կը թողուր մեղ հետեւեալ պարտքերը։

1. Եկեղեցւոյ պաշտօնէից Մեզա, ամսաթու-	7700.— լէվա
շտկները չվճարուած	
2. Սոմավաճառակին և անխավաճառակին վճարելի	2251.60 *
3. Հանգուցեալ աղբայիններու ժառանգորդ-	8768.35 *
ներուն պահան ջները	
4. Վարձակալներու առ պահ ձգած և իւ-	4765.— *
րենց վերադարձու ելլիք տէփողիթները	
5.. Արգ. «Ար Քրիչչ» Հերանգանոցի պա-	7155.70 *
հանչը պնակի և օրացոյցի հաշ. էն	
6. Էջմիածնայ պահանջը պնակի հաշ. էն	2093.10 *
7. Ազգ. կալուածներու պետական տուքը,	
նախորդ տարիներու հաշ. էն	6231.50 *
8. Հինգ ամսուայ եկեղեցւոյ ելեքտրական	
լուսավուածութեան պարտքը	979.80 *
Բնակամէնը վասրելի	39945.05 *

Նոյնակո ազգ. կայսւածներու թաղայիտական զանազան տուքը քերը, որոնց ընդէ, գումարը մօտ 7000 լէվակի կը հանդէին, չէին վճարուած, ինչպէս նաև ազգ. վարժարաններէն ուսուցչական մարմ-նոյն նախորդ տարսուան ամսաթոշակներէն անվճար մասցած ժօտա- ւորապէս 40000 լէվայի պարուքը, որով աղբային ընդհանուր պարտքը կը բարձրանար մօտ 90000 լէվայի։ Իսկ միակ հաստա-

\* ) Եռանգամ Յանձնամուլիս իրենց սիրայօժար աչակցու- թիւնը տրամադրեցին նաև անզւոյս աղբայիններէն Տ.Տ. Փաստա- բան Սարդիս Գրիգորօֆ և Վառնայի Նահանգային Խորհուրդի ան- զամ Գարդիչէ Պօյննեան, որոնք իրենց խորհուրդներով թէ գործնական օժանդակութեամբ. միծապէս օդակար եղան։

տուն եկամուտի անբփոր եղող ազգ, կալուածներու վարձքերը մինչև 1923 տարբեր պլատֆորմաւած աշխախտաւած եր նախ. թաղականութեան կազմը: Այս այլ վիճակի մեջ ձևադարձիկ կամ պահպանայի գործությունները կամ պահպանայի գործությունները կամ պահպանայի գործությունները:

1. Կարելին ընել անցոյս Ազգային Երիտեցական ու Պրթական գործերը ու պիտի կանոնաւոր պրելու նամակացներ գործությունները Ազգ վարժարանի Պատ. Հայոցարան թեառ:

2. Աշխատի Պուլիարանոյ թաղականութեանց ներկարացութեանը համապատասք մը կազմութեան, գծելու և վայսերցնել տալու համար Պուլիարանայ թեմին համար անդրամեջ կամ դուքսութեանը միջնորդ մի անդրամ ընկ միշտ միջրջ տալու: Տամար թաղական խորհուրդներու անկիրազարն վիճակին ու կամայական գործութեան թեառ թեառ բարենց խնչուս նաև ապօնովիլու համար Պալդիարանայութեան բոլորին (առանց հարատակի թեառն խարգեթեան) մասնակցութեանը ընարս թեանց և ըստ ամուր նորմանայ ընսրութեան ձեարկելու:

3. Բնել նախոք նախորդի ու Թաղականութեան միքանութեան գործառնութեանը և մանրանասն տնյեկադրութեան ընել այդ մասին ժողովություն:

Այժմ առաջնու երկու կեսերու շուրջ կատարուածի մասին խօսիլ մեր նիւթեն զուրությանը սրբած սրբած անդրազառանքը իր աւտար առիթին, մեր պաշտօնավարաւութեան ընգնանուր անգնակարնութիւնը ըրած միջոցնիս, կանցնենք երբորդ կէտին՝  
— նախորդ Թաղականութեան բարգական ու նիւրական գործառնութեանը և նիւնուրեան զոր նիւնուրուած օանձնամուգուն կատարել տուած է մասնաւոր քննիլ օանձնամուգուն մը և որուն աւելիկա զիրը առաջնու մասը կը կազմէ նիւրայ տնօլուկացրութեան: Այն կետերը որոնց մասին խօսուած է քննիլ օանձնամուգուն տեղեկադրին մէջ, նաւանդաւ օանձնամուգուն անրի չի ահօնար անոնց մասին անդրազառանալ, այլ համառատակի պիտի ներկարացնեց կարգ մը հարցնը նախորդի Թաղականութեան գործառնութեան վերաբերություն շաշափուած չեն թենիչ օանձնամուգուն պիտի ներկարացնեց կարգ:

**Պիտի եւ Եկեղեցոյ մատակարագութիւն:**

Դաստիարակական մարմուն մը համար ինչպիսին է տեղուության առաջականութեանը, անհրեշտ չարսն պայման չը, որ ան ունենալու իր պիտմանը, ըստ այնու համարակալուած նիւնուրուած մը կրաքնալ հաստակուարելու համար իրեն խոտանուած հստառապերինը, իմրադդրար այս կարեւոր պարուածն եւու անտեսուած է նախորդի թաղականութեան կողմէ: Իր չորս արքայ պարտության մատակարագութեան պայմանը ազգություն ու կազմութեանը կամ պահպանայի գործությունները:

Անարք զարմաւոր ու իրանուն պղնաութիւն ավելացնողը

րու և նթարելած արդյ. Անտառկաց մի միաժամ իրենց կուսակիցներուն զործ հայթայիշելու և նկատումայի (Միայն 1921) 22 գործոցտկան տարբերակներու որ նախակի և Հայոցարքութեան կողմէ Ազգ. Վարժուանին ու Եկեղեցու համար կազմուած է թառն պիտեհէ մը, ակային այն ալ նոյն աւարոյ ընթացքին իրմէ, անոնառաւած է նաս որդ Թաղականութեան կողմէ, որը երբէք չէ ո դած ենթարկուի իր համաձայնութեան թեսութ իրմէ կողմուած Ազգ. Բնդէ, Պիտեհէին արամանութեանց և Այս լին նախարդ Թաղական Խորհրդու պարագան ու ուղարկած համար աւարական է անձնական կամաց առաջարկած չափով Ազգ. Վարժարանին օժանդակելու, ընդհակասակը ան խիստ ացիկորոշէն ու միայն անձնական, խնամմական ու կուսակցական շահերէ առաջնորդուածնելու երբէք չէ հասաքրքրուած Եկեղեցու ու աղղօքառական կազմամեջիրու հանութները աւելցուելու իր պարասկանութեանդիքը ։ Հայութագույն Այսպէս բարորովին անքանթիւ տարուած են բանկայի եկեւմուաքի համար և աչ մէկ անդ չէ արձանադրուածն իսկնկալը յանձնուած մաներու քանամկաւթիւնը և խիստարէնը սփացված հասոյթը, կարենալ քննութեան մը պարագային տառագիլու համար թէ իսկապէս խցանուարէն տարուած են բանկայի համարները ։ Մէկ խոսքով բանկայի որ ազգ ոնապէի իրն ամենամաքրեն ու համայթեան մին իր ներկայացնէ, յառած վիճակի մը և նմթարկուած է նախորդ Թաղականութեան օրուի իր անգամներէն միօքն յանձնուած անքոնմիրու Յանձնալէն դպրոցած նախարարների իսկու կողմէ չէ քննուած և հասարարուած թէ իսկապէս պատաց բանկայակեանին կազմէ գանձապահին բանձնուած գոյ մարմերը համապատասխան են մոնիրէ գոյացած հասոյթին, օրովհետեւ ացց կարելի չէր, ինչոքս որ վերը մշակվինք, բանկայի համար մասնաւոր եկեւմարի տարարի չը բան դասաւ, Մինչեւ կանաչի կազմէ քննութիւն իստարուած թուական նոյնիստիւ հասական միացիւ բարութեան առաջարկած անձնական անդապահին և բանկայակեան միջն կարգադրուած է ։

Փարբիկ բազգատական հաշիս մը բանկարէն գոյացած հասոյթ ներու մասին զաք ստորեւ կը ներկայացնենիր քաղերով Թաղական առաջնորդն և ներկայ Թաղականութեան օրով ։ Յահուայ ժամանակական կամով չոցի մը համար և նախորդ Թաղականութեան օրով անյոյն ժամանակամիջոցի մէջ, կը անմանենք որ նար և Թաղականութեան ձեռք առած միջոցներուն շնորհի արտ առ իր միայներեց ամսուայ ընթացքին բանկայի մասնագագակէս 6000 էվլայի անելի համայթ մը տուած է, քան նախորդին օրով Նկատու պարագայ մը ն. է այս, որ կամկածեն կուտայ մազ քէ այնոքան ալ ինչ նոյօքէն ամարդած ին նախորդ Թաղականութեան օրով բանկայի գործադրութիւնը ներբռուածուացած մէջ և ուղարկ (բանալուած) պահպան աւաղու զաք Այսի նոյնամասը արևէ Օ՛Ռ մասին մեր ու նմադ պիու

բանկ զաք Այսի նոյնամասը արևէ Օ՛Ռ մասին մեր ու նմադ պիու

## ԲԱԼԴԱՏԱԿԱՆ ՀԱՅԻՒ

Վասնայի Սր. Սարդիս Եկեղեցւոց բանկալի հասոյթին, նախարդ թաղականութեան օրով 1922 Հոկտ. 1էն մինչև 31 Դեկտ. 1922 և ներկայ թաղականութեան օրով սկսեալ 1923 Հոկտ. 1էն մինչև 31 Դեկտ. 1923:

	1422	1522
Հոկտ. ին բանկալի հասոյթ	4978.40	6350.80 լէվա
Նոյեմբին » »	5929.05	9030.45 լէվա
Դեկտ. ին » »	9090.35	8489.70 լէվա
	17999.80	23870.95 լէվա

ՄԱՆՈՒ. — ա. Նկատի պէտք է ունենալ նաև սա պարագան որ 1922 թաղականի հաշու ոյն մէջ ցոյց արուած ժամանակամիջոց ցին Վասնայի մէջ Զաւէն Պատրիարքը, Ստեփանոս Արքեպոս. ը և բազմաթիւ հայ զաղթականութեւն մը կը զանուէր, իսկ 1923 տարւոյ վերջերը կառավարութեան ստիպման տակ զաղթականութիւնը մէկնած էր Վասնային այլուր:

թ. 1922 և 1923 տարւոյ ընթացքին մամերու դիները փոփոխութիւն չէ կը բաժ.

Նոյն կամայական ու խնամիսական վերաբերմուքը ունեցած է նախարդ թաղականութիւնը, իր իսկ ձեռքով կազմուած, պահապահութեան, թաղման, մկրտութեան և աւայն եկեղեցական արարողութեանց առթիւ գտնաւունվիք բուրեցւ յատուկ սակացոյցի զուծադրութեան առթիւ, ինչպէս նաև մոմերու յատուկ գինի և ցուցակը երբէք ճշտութեամբ չէ գործադրուած նախորդ թաղականութեան կողմէ: Միշտ բացառութիւնները ըրած են իրենց ծանօթներու և կուսակիցներու, զեղջուած զանձելով սակացոյցի մէջ նշանակուած գումարները և թէ մանրու գիները: Օրինակի համար հսու պիտի յիշենք շատերէն միայն մէկը՝ նախորդ Սուանդամ Յանձնաժողովի անդումներէն ներսէս Փափազեան, որուն կնքահօր Ներսէս Փափազեանի նորոք Արքար Փափազեանի պասկապրութեան առթիւ (17 Դեկտ. 922) գանձու ած է իրը պասկապրու 400 լէվա, սակացոյցի ամենավերջին կարգի տրամադրութեանհամաձայն, որը յատուկ է ազքատ դործաւոր դասակարգի պատկանողներու ոչ թէ վաճառականներու, ինչպէս ինչ Պր. Արքար Փափազեան, որուն կնքահօր Ներսէս Փափազեանի դնած մամերուն նոյնուէս մանաւոր զեղջ եղած է: Մէկ խօսքով նախորդ թաղականութիւնը համաց սույտնախուած զաղանալը քաղաքականութեամբ մնե վեաներ հասցուցած է ազդ. մասուկին:

Հսու աւելորդ շենք նկատութ յիշելու նաև ուրիշ սրինակ մը որը իր ժամանակին մինչև իսկ ժողովուրդին մէջ զայթակզութիւն առաջ բերած է: 1923 Մայիս 7ին կը պատկուի կ. Պոլսեցի Տ. Տիգրան Յակոբեան: Յայտնի մեծանարուստ Յակոբեան ընտանիքին մէկ անդամը, որը նախորդ թաղականութեան անդամներուն կուսակիցը (Խամկալար) ըլլալուն իրեն բացասարար պատիւ: Ընել կուզին միայն 100 լէվա զանձելով իրմէ իրը պատկա-

մ. այս անարդարութեան դէմ այն ատեն կը բողոքեն մինչեւ վասնայ զանուող գաղթական քահանաները. Պոլսէն ծանօթ պայմ. Պ. Յակոբեանի նիս թակոն փայլում վիճակին Առյն բոպրին գատմէնը առորեւ կուտանք քաղելով թաղականութեան պահէն:

Վառնա 9 Մայիս 1923

### Տիար Ասեմանպէս եւ Անդամի

Պատ. Թաղ Խորհրդոյ Ար. Մարգիս Եկեղեցւոյ

ՎՈՐՈՍՅԻ

Ամսույս Դին Երկուշաբքի Երեկոյ Պոլսեցի Տիար Տիպրան Յամակադրութիւնը կատարաւուծ է իր տան մէջ. . . և չենք իր թէ ինչ նպասակազմ պատկադրութիւնը կատարել կուտաք ոյս Արժ. Հօք. և հարիւր լեվա որ պատկադրամ մը գանձուի. պարագան մեր ամենուս ու քաղցրութիւնը գրաւելով ցաւ ի սիրու անք հարցնել թէ այսպէսով միթէ ազգային սնամուկը և մեր ունքները սանակոխ եղած չեն բլրաւ.

Քանի որ մեզ ամենուս ծանօթ է Տիար Յակոբեանի տռաստա-  
ռ. թիւնը, ազնուութիւնը և մենանձնութիւնը, միթէ այս  
ազան յիշեալին արքանապատութեան վիրաւորանք մը չէ՞ր  
նենույիսին սակացոյցէն ալ վար պատկադրամ կը դանձուի,

Ներկայիւս կը խնդրենք որ այս մասին բացատրութիւն տա-  
ռանգերձ կրին անզամ այսպիսի անկանոնութիւն անդի  
հնայ.

### Մնամք ազօթարար

Ենովք Քնյ Տէր Յարութիւնեան

Սարդիս » Պետրոսեան

Սահակ » Վարդերեան

Յովհ. » Տէր Վրգանէսեան

Կարապիտ Քնյ Սրեւ անեան

Փոքը բիկ բաղդատական հայիս մըն ալ կատարուած Պահնե-  
գայցած հասոյթներու մասին, քաղաքած Թաղ տռամարներէն:

Նախարդ Թաղականութեան օրով 1922 Հոկտ. 15-ն սկսեալ  
և 1923 Մայիսի վերջը (ութ ամսուայ ընթացքին) տեղի ունե-  
ան 42 պատկադրութիւններ, որոնցմէ գանձուած է ընդամենը  
5 լէվա, իսկ ներկայ թաղականութեան օրով 1923 Հոկտ 15-ն  
ալ մինչեւ 1924 Մայիսի վերջը. նոյն ժամանակամիջոցին  
մատանընթացքին տեղի ունեցած հն ընդամենը 29 պատկադրու-  
թեր, որոնցմէ գանձուած է 25500 լէվա: Նոյն տարբերու-  
թը նուև նախարդ և ներկայ թաղականութեանց օրով մահուան  
կրտութեանց առթիւ զսյացած հասոյթներու մէջ:

Նիւակնելի և խիստ կարեւոր պարագայ մըն է նաև նախորդ թաղականութեան օրով, ազդ մատուցելն ծախուած զումարներու և եղած ծովովներու մեմ մասին համար ու և որուամ հախավեռ կամ վերցնելու մասնաւծ, որը տաքրաւան օրէնք է համարական հաստատութիւններու համար:

Նոյնովէս կարեւոր պարագայ մըն է Ազգ անուուկին ելեւ մուռքին արդարացն ցիչ մայս մէնմիներու չպարիսին 1 Դիմու 1919էն մինչւ 1 Դիմու 1921 երկու աարաւայ շրջանին համար, որոնց մասին պետական քննիչը եւս ցիշած է իր մեղքեացրին մէջ որով կարելի չէ եղած քննին թէ վերուի հայ ժամանակի ամենակամիջացին առաջարներու մէջ արձուուագրաւա համայնքները թէ ծախանիր բակապէս եղած են և որքան համապատասխան են իրականութեան: Թաղականութեան արխիմին մէջ կարելի չէ եղած զանալ 1919, 1920, 1921 և 1922 պարինմիրու բնմացքին համարուած իւզագինը տեսրակները, որոնք ինչպէս կ'երեւայ ոչնչացուոն են դուզարկէ լու համար կ'օրդ մը անկանոն թիւններ, ինչպէս այդ կը անսնուի 1923 տարւույ ծնունդի առնիւ իւզագինի պետակին զոյցացած զումարեն, որմէ զոյցացած համարներու մէջ ցոյց որուած է միայն 180 լէվա, իբր ուսին թաղականութեան օժանդակ անոար Պր. Դադարս թամիզեան, որու ձեռքով յանձնած է նոյն պնակի հասոյթը նախանախախան թաղականութեան գանձարան Պր. Խաչիկ Միքայէլանիքը կը բարտարարէ թէ 1033 գոր ինք անձամբ յանձնած է Պ. Գանձան գլուխն և որուն ատենագրութիւնը երկու ամիսներ յետոյ միայն կաղմուած է ցոյց տրուելով հասութ միայն 180 լէվա, իսկ ներկայ թաղ, օրով 1924ի օր նունդին նոյն պնակին զոյցացած է 1039 լէվա հասութ բացի բանկալ արձանագրուող ազգայիններէ զոյցացած 1175 լէվա հասոյթէն:

### Ազգ. Վաղուածներու մատակարարութիւն

Նախորդ թաղականութեան օրով ազգ կալուածներու ապիկար մատակարարութեան պատճառաւ, ինչպէս նաև անոնց կուսակցական նկատութեան բով օգտագործելուն շնորհիւ նոյնովէս մեծապէս տուժած է ազգ անտուկը:

Այժմով թիւմիա գէւորգեանի (Խամբակար) մը առանց անուրդի ամբողջ չորս տարուայ իրենց պաշտօնաւարութեան ընթացքին 100—150 լէտայի չնշին վարձքի մը փախարէն որամադրած են ջար Պոլիս փողոցը աղջկանց վարժարանի նախակին չէնքր, Այս պարտնոր օդառուելով նախորդ թաղականութեան իրեն հանդէպ գոյց տուած բարիացակամութեանին ոչ միայն չնշին վարձքով մը օգտագործած է տարիներէ և վեր վառնայի անհնափայլուն հրապարակներէն միոյն վրայ դանուով յիւնալ ազգապատկան կալուածք, այլ նոյնինի կանոնաւորապէս չէ վճարած որդ չնշին վարձքն ալ, որով ազգ շէնքըն հեռացուած միջոցին Երևան Գէւորգեան ազգ սնաւակի նա վարձքերէ պարտական կը մնար . . .

2000 լէվայի գումար մը, ինչպէս նաև ջուրի և աղբի չորս տար-  
ւայ թաղապետական տուքը 1134.50 լէվա իրմէ չէ գանձնած  
նախ. Թաղականութեան կողմէ, հետեւաբար այս գումարն ալ ազդ-  
ոնտուին է որ պիտի տուժէ, թէն. Եռանգամ Յանձնախումբու գա-  
տական հետապնդման ձեռնարկած է Երեմիայ Դէւորդեանի գէմ:  
Նախկին թաղականութիւնը այնքան անրոյթ գտնուած է այս տա-  
թիւ. որ իր վարձակալը Երևանիայ Գէւորդեան, 100—150 լէվա  
ամսական վարձք վճարելով, նոյն թաղականութեան օրով և անոր  
աշքին առջեւ, ինք բնակիլէ զա և, նոյն շէնքին մէկ մասը վարձու-  
առած է ուրիշներու ամսական 3—400 լէվայի հասոյթ մը ապա-  
հովելով իրեն Վերջին տարիները նոյն շէնքէն սրան մըն ալ  
արամադրուած է Ամսակավար Ազատական Կուսակցութեան իրրակումը  
շնչին վարձքի մը փոխարէն: Եռանդամիս պաշտօնի կոչուելէն  
անմքջապէս յիտոյ Ակումբի վարչութիւնը տեսնելով որ այլնու  
անկարելի պիտի ըլլայ ջնջին վարձքով մը օգտագործել ազգա-  
պատկան, ինչդրոյ առարկայ շէնքը, 11 Հոկտ. 1928 թաղակիր  
նամակ մը ուղղելով Եռանդամիս պարպեց զայն: Սոյն նամակով  
իրենք եւս կը խստովանին ազգային շահերը վանդակած: ըլլալ-  
նին, առորեւ կուտանք այդ նամակին պարունակութիւնը, քաղե-  
լով թաղականութեան արխիվէն:

ԽԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Վառնայի Ակումբ  
Քիւ. 22

Վառնա, 11 Հոկտ. 1928

Վառնայի Ա. Սարգիս Եկեղեցւոյ  
Եռանդամ Յանձնախումբին

ԱԱՏ

..... Թամկովար Ազատական Կուսակցութեան վահանայի Ա-  
կումբի վարչութիւնը կը ծանուցանէ, որ ամսոյս 15-էն, սկսեալ  
ուղու կը թողու Ազգապատկան շէնքին մէջ իր ունեցած կսարան  
Ընթերցարանը, որպէսզի, ազգային շահերը վանդի չենթարկուին  
և Դուք չ'ստիպուիք որինական միջացներու զիմելու: "

Դիւնան

Թամկավար Ազատական Կուսակցութեան  
Վառնայի Ակումբի Վարչութեան  
Ասենադպիր վ. Ասենեպետի  
կ. ԹիրԱ. Քիւն

ՓԱՓԱԶԵԱՆ

Խնդրոյ առարկայ ազգապատկան շէնքը, քանիցն Ազգի վար-  
ժարանի Հոգաբարձութեան կողմէ գրաւոր թէ բերանացի պահան-  
չուած է որ պարսուի և իր առանադրութեան տակ դրուի, ոդ-  
տագործուելու: համար վարժարանի պէտքերուն, նկատի ունենա-  
լով որ ներկայ վարժարանի շէնքը նեղ կուզար աշակերտութեան,

որով շատ մը տղաք փողոցը կը մնային, սակայն ամեն անգամուն ալ նայ ի ին թաղականութիւնը բնդ առաջ չէ գացած հոգարածութեան ազ արդարացի պտնանջին, որովհետեւ այսպէսով իրենց կուստիցութիւնը (Ծամկավար) պիտի զրկուէր ջնջին վարձքով մը օգտագործած իր ակումբի սրահէն:

1922 ի վերջերը երբ վարոնա խճողուած էր բազմաթիւ հայ գաղթականներով, որոնցմէ նևիթապէս անկարողներուն թէն ազգ վարժուանը ու եկեղեցին տրամադրուեցան, սակայն անոնց թիւը խիստ մեծ ըլլալուն շատերը ոտիպուած էին Եկեղեցուոյ բակը և այլ բացօքեայ և հակառառողջապահական անձեր գիշերն անձրեւին, ցուրտին ու փուրքին, իսկ անդին մեր Ռոտլավար թաղականները իրենց շնչին (Ծամկավար գործիչ Արտակ Դարբինեանի) տրամադրած են ամիսներով, նոյն ազգապատկան շնչին մէկ մասը երբ այս Պարոնի նիւթական վիճակը կը ներեր վարձքով բնակարան մը ճարել իրեն համար, նման գայթակղեցուցիչ դէպքեր խիստ շատ կան ազգ. կալուածներու նախ. թաղականութեան կողմէ մատակարարունելու ընթացքին, որոնք մի առ մի թուելու համար հատուքներ լիցնել պէտք պիտի ըլլար:

Մինչև պետական քննիչին կողմէ նախակ. թաղականութեան գործունէութիւնը քննութեան ենթարկելիք, ազգ. կալուածներու և ու մէկը անուրդով վարձու արուած է, որմէ անազին վասաներու ենթարկուած է ազգ. սնտուկը իր օրինակ մը յիշենք երեմիայ Գէւորգեանի վարձուած ազգապատկան շնչնքը: Եռանդամ պաշտօնի կոչուելուն պէս նոյն շնչնքի միայն վերի մասը անուրդով վարձու արուեցաւ Պր. Աթանաս Զլաթարօֆի տարեկան 13300 լէվայի, որով մատաւորապէս տարեկան 10000 լէվայի տարբերութիւն մը կ'ապահովուէր ի նպաստ Ազգ. Սնտուկին, բազդատելով նախորդ թաղականութեան օրով նոյն շնչնքն ստացուած վարձքին հաս: Այսպէս 4 տարուայ ընթացքին միայն նոյն շնչնքին վարձքերէն ֆասուուծ է Ազգ. Սնտուկը մօտաւորապէս 40000 լէվայով:

Նախկին թաղականութեան ապիկարութեան գլուխ գործոցը կարելի է համարել՝ քաղաքիս բարեկարդութեան օրէնքի տրամադրութեան համաձայն՝ ազգային կալուածներու ենթարկուած բարձալասիօնի հանդէպ անոր բռնած բոլորովին անտարեր ու անհոգ վերաբերմունքը:

Չորս տարուայ իրենց պաշտօնաւարութեան ընթացքին երէ էք չեն հետաքրքրուած թէ՝ ազգապատկատ քանի մը կտոր կալուածները վերոյիշեալ օրէնքի տրամադրութեանց համաձայն ինչպէսի փոփոխութիւններու կ'ենթարկւին, որ ըստ այնմ միջոցներ ձեռք առնուէին ազգային շահերը պաշտօնանելու համար:

Այսպէս ազգային այն կալուածները որոնք, համաձայն յիշեալ օրէնքի տրս մագրութեանց, ամբողջ թեամբ և կամ մասամբ մը կը կցուին (տրուին) դրացի կալուածատերերու հողերուն, այդպիսի տեղերու համար շահազրդուող սեփականատերերը ցամանակին մի-

Հոցներ ձեռք առնելով գնահատել տուած են անոնց աժէքները ասմինիսթրաթիֆ քօմիսիաներու միջոցաւ այն ատենուայ ածան գիներով, որոնց զէմ սակայն նախորդ թաղականութիւնը գրեթէ ոչ մէկ միջոց ձեռք առած է, որով խնդրոյ առարկայ ազգ. հողերը շատ ածան գնով մը ազգին ձեռքէն կառնուին այսօր:

Իսկ Ազգ. կալուածներու կից դրացիներու այն հողերը, որոնք նոյն օրէնքի տրամադրութեան համաձայն ազգ. կալուածներու կը կցուին (կը տրուին), անոնց գնահատումը գժրազգաբար կատարել չէ տուած նախ. թաղականութիւնը (գրնէ օրինակ առնելով դրացի կալուածատերէն) իր չորս տարուայ պաշտօնաւարութեան ընթացքին, կարենալ օգտուելու համար յիշեալ օրէնքի տրամադրած աժան գիներէն, Խնդրոյ առարկայ օրէնքը որ այն տաեն օրէ օր փոխուելու վտանգին ենթակայ էր, խկապէս ալ տարիէ մը ի վեր փոխուած ըլլալով, այժմ նոր օրէնքի համաձայն տասնապատիկը եւ ալ աւելի կը գնահատէ ազգին տրուելիք հողերու արժէքը, Հոռ օրինակի համար յիշենք միայն "Զար Պօրիս" փողոց թիւ 116 կալուածի պարագան: Յիշեալ ազգ. կալուածէն մաս մը կառնուի նոյն փողոցի ընդլայնման համար և մաս մըն ալ կը արուի Պր. Մուրաս Երանոսեանի: Արդ, ազգ. կալուածին նակատէ իփաղոցի երեսէն) կրզմէն Պր. Երանոսեանի տրուած մասին համար ժամանակին գնահատում եղած է իր դիմումին վրայ և 250 լէվա գին նշանակուած քառակուսի մեթրօին, սրով այդ ջնջին գինով (Պր. Մ. Երանոսեան այսօր տէր կը զառնայ նոյն հողին: Իսկ ազգ. կալուածին ենելի կողմէն դրացիներէն (Երանոսեաններէ, Մեռինեաններէ և Պրաքալօնէ) առնուելիք հողերու (որոնք ազգ. կուռուածին կը կցուին) գինը այժմ նոր օրէնքի տրամադրութեան համաձայն նշանակուած է 1000—1500 լէվա քառ. մէթրօն, որով ներկայիս ազգ. կուռուածին դրացիներէ կցուելիք հողերու համար ազգէն կը պահանջուի 429565 վէվայի պատկառելի գումար մը. երբ նոյն հողերը եթէ ժամանակին գնահատել տուած ըլլար նախկին թաղականութիւնը, կարելի պիտի ըլլար շատ ածան (առ առաւելն 25—30000 լէվայով) գինով մը ձեռք ձգել զանոնք: Այս կացութիւնը առելի վտանգաւոր կը դառնալ ազգային տհասակէտով երբ նկատի ունենանք թէ Վառնայի թաղականութիւնը երբ և իցէ չէ կարող պահանջուած այդ հոկայ գումարը նարել ու Խնդրոյ առարկայ հողերու փոխարժէքը վճարել, իսկ նոր օրէնքը կը պարտադրէ որ առ առաւելն երկու տարուայ ընթացքին վճարուին ազգ. կալուածին դրացիներէն կցուելիք հողերու փոխարժէքը, հակառակ պարագային դրացիներու իրաւունք կը տրուի անուբղով ծախել տալու խնդրոյ առարկայ ազգ. կալուածը, որը այսպէսով ամբողջութեամբ ձեռքէ ելլելու վտանգին ենթացքուած է:

Ահա ինչ վասներ պատճառած է ազգին նախորդ թաղականութիւնը իր ասիկարութեան. ու ազգ. շահերու պաշտպանութեան հանդէպ իր բանտծ անրոյթ ընթացքովը:

Նոյնքան և աւելի ձախակեր գործ մը եղած է նախորդ թազականութեան կողմէ «Օլորիտսքա» փողոցի (Վառնայի ամենալաւ հրապարակներէն միոյն) վրայ դանուող ազգապատկան կալուածին ծախութը. հակառակ այդ մասին իրենց կարծիքը տալու համար այն ատեն ժողովի հրաւիրուած Հպարարձութեան անդամներուն և թէ մէկ քանի ազգայիններու պնդումներուն որ այդպիսի կալուած մը ձեռքէ չ'հանուի. նախորդ թազականութիւնը առանց անսալու ոյդ առթիւ իրեն տրուած խորհուրդներուն. ջնջին զինով մը ձեռքէ կը հանէ յիշեան աղքաղատկան կայուածը և անոր վաճառումն գոյացած դումարով առանց արտօնութեան ատզավարներ (պարագաներ). շինել կուտայ «Զար Պօրիս» փողոցի կալուածին կից, երբ շատ լա ծանօթ էր իրեն թէ նոյն փողոցին ընդլայնման հետեւանոք այդ տաղաւարները շատ կարծ կեանք պիտի ունենաին քաղաքապետութեան կողմէ ամեն վայրին ըլուզման վաճագին ենթակայ ըլլուգ. ինչ որ տեղի ունեցաւ քանի մը ամրաներ առաջ, որով թէ «Օլորիտսքա» փողոցի ազգ. կալուածը ձեռքէ ելու. և թէ անոր փիխարժէքով շնուած տաղաւարները:

Ազգային կայուածներու ապահովագրութեան միջոցին լոկ նախորդ թազականութիւնը կուսակցական նկատումներէ առաջնորդուած. փիխանակ աւելի նպաստաւոր պայմաններով ապահովագրող ընկերութեանց դիմելու, նախապատութիւն առւած է իր կուսակիցներէն նամկալար Ա. Շիտանեանի (ապահով. ընկեան դործակալ) հոդ չէ. թէ այդպէսով ազգ. սնառուկը տուժած ըլլայ, որովհետև Պր. Շիտանեանի թէ աւելի բարձր ապահովագին (փիխանակ թիւ 1-ով, ապահովագրուած է  $1\frac{1}{2}$ —3 ով), վճարուած է և թէ դրենց արժէքն շատ. աւելի դումարներով ապահովագրել տրուած են կուլուածները.

Ամէն բան խեղադիրելու մէջմիստ ճարպիկ նախորդ թազականութիւնը, յանդկանած է նոյնիսկ պայտօնապէս ու հրապարակաւ. ստելու ալ. Այսպէս իր 25 Հոկտ 1923 թուակիր յայտարարութիւնովը (Անդրածեց լուսարանութիւններ Վառնայի հայութեան վերնագրով) կը ծանուցանէ ի դիտութիւն տեղւոյս հայ հասարակութեան հետեւալը թէ ոիր վայելած ժազովրականութեան և վասարութեան արդիւնքը չէ ներկայ տարուան Պր. Սիմօն Մարինեանի գնուած կես միլիօն արժուարեամբ տուեր (բառ ու բառ արտագրուած իրենց վերոյիշեալ յայտարարութիւնն) երբ Վառնայի ամբողջ հայութեան շատ լաւ ծանօթ է թէ Պր. Սիմօն Մարինեան իր ազգին նուիրած (որոշ պայմաններով) տան փիխրէն, ոչ քէ կը միլիօն լիվա, այս կես փարայ ալ չի սազած նախ կին թազականութիւնն:

Պ. Ա. Մարինեանի ազգին նուիրած տունը բնակարանային օրէնքի տրամադրութիւններէն ազատ կացուցանելու համար, նախորդ թազականութիւնը իր ձեռք առած միջոցներովը կրկին ցոյց կուտայ իր անհարակութիւնը և ազգ. դրամներու անաշիւ մմխա

**ՌԱՊԵՏ:** Այսպէս՝ բնակաբանային յանձնախումբերուն (ԺՈՒՂԱՎԱ  
ԿՈՒՆԻՏԱ) կողմէ նայուելիք դատերուն համար օրէնքը բացարձա-  
կասէս փաստաբաններուն արգիլած ըլլալով հանդերձ այսպիսի  
զատերու հետապնդում կատարելը և կամ միջամուխ ըլլալը, նա-  
խորդ թաղականութիւնը իր ապիկաբութեան պատճառաւ, անոն-  
սած է յիշեալ օրէնքը և յիշեալ տունին վարձակալները հանելու  
գործը կրկին յանձնած է ոմն փաստաբան Քօթարօֆի, խոռոչանա-  
լով 2000 լէվա վարձատրութիւն, 500 լէվայի կանխավճար մըն  
ալ ընելով իրեն, երբ շատ պարզ էր որ փաստաբան Քօթարօֆ  
բացի ազիբարպիր իր գրելէ (զոր կարելի էր 50—100 լէվայով ընել  
տալ) ու է օգուտ չէր կրնար ունենալ զատավարութեան ընթաց-  
քին, օրէնքով արգիլուած ըլլալով իրեն հետապնդել նման դատեր։

Այս առթիւ ապրեր ապօրինութիւն մըն ու գործած է նա-  
խորդ թաղականութիւնը, թէև փաստաբան Քօթարօֆի, իր ան-  
դամներէն, ումանք «ազօ քէւէուէն» կը խօսանան 2000 լէվա վճա-  
րել, սակայն այդ իմաստով առնուած ու է որում կարելի չշեղա-  
գանել նախ։ Թաղականութեան ատենագրութեանց մէջ, որով մեր  
պաշտօնի կոչուելին յետոյ մերժեցինք վճարել Պր. Քօթարօֆին  
մեացեան 1500 լէվան, սակայն նախիկին եռանդամը իր հրաժարելէն  
յետոյ իսկ ուզեց այս ապիկաբութիւնը ու ապօրինութիւնը պար-  
տազգլել մնջ դեկտվ 8 մարտ 1924 թագակիր գրութիւն մը, որ  
սահիպութնք խնդրոյ առարկայ գումարը վճարել փաստաբան Քօ-  
թարօֆի ազդ։ մնասւկէն Անա և այդ նամակի պարունակութիւնը՝

Վառնա 8 Մարտ 1924.

**Պատ. Անդամի Թաղ. Խորհրդոյ Եռանդաւ Յանձնախումբին  
ԱԱՏ.**

«Ներկայիս կը յայտնենք Զեզ թէ Տիար Սիմօն Մարքնեանի  
հաշույն ազգին թողած ուռնին վարձակալները հանելու գործը մեր  
կողմէ յանձնածած էր փաստաբան Պր. Քօթարօֆի, որուն համար  
(2000), երկու հազար լէվա վարձատրութիւն, խօսացրուած էր,  
Արդ... այս պարագան կը հազորդենք Զեզ առ ի գիտութիւն։  
Նախիկին Եռանդաւ Յանձնախումբի Անդամք

(ստոր.) Ն. Ս. ՓԱՓԱԶԵԱԸ և (ստոր.) ԱՏ. ԱՐԳԱՐԵԱՆ

Նման ապիկաբութեանց ու ապօրինութեանց գէպքեր կա-  
տարուած նախորդ թաղականութեան օրով կարելի է մատնանշել  
բազմաթիւն օրինակներով, որոնցմէ մնապէս տուժած են տեղ-  
ւոյս համայնքին շահերը։

Նախորդ թաղականութեան կազմած Ասենագրութեանց անկա-  
նոնութեան մասին երկար չի խօսելու համար միայն ըսկնք թէ  
անընք մեծ մասամբ ամիսնեց յետոյ գրուած և սայորազրուած են  
նման այնախօններու կողմէ որոնք երբէք ներկայ չեն եղած թա-  
ղականութեան ժողովներուն։

Նախորդ Թաղականութեան օրով Գոյշատումարի (նիւենտարի հիւրա) մը չ'զոյսւթեան պատճառու, «րքան» կորուսաներ եղած են եկեղեցւոյ գոյքերէն, այդ արդէն ինքնին կը տեսնուի սոյն տեղեկագրութեան կցուած եկեղեց, զոյքերը քննող յանձնախումբի տեղեկագրէն։ Գոյքատոմարի չի գոյտթիւնը պատճառ եղած է նաև եկեղեցւոյ նուիրուած անհաշիւ գոյքերու կորուստին, որոնք մեծ մասամբ առանց արձանադրուելու կորուստած են արդէն և որոնց հատքը այժմ կարելի չէ գտնալ։

### Նախորդ թաղականութիւնը Ս.գ. Վարժարանի հանդէպ.—

Նախորդ Թաղականութիւնը պարտաւոր ըլլալով հանդէրձ, որքան որ կարելի է տնտեսագիտորէն մատակարարելու եկեղեցւոյ և ազգ կալուածներու հասոյթները, որպէս զի հնարաւորութիւն ըլլայ առաւելագոյն չափով Ազգ վարժարանին օժանդակելու, ընդհակառակը գոյցած հասոյթներն ալ անդրաբխիզօրէն ու անտեղի ծախուած են, չատ անզամ մի միայն Ազգ վարժարանին չ'օժանդակելու և կամ կարելի եղածին չափ քիչ օժանդակելու մասղրութեամբ Այս բոլորին միակ պատճառը նախսկին և ներկայ հոգաբարձութիւնները ևլու կամայակասար և իրենց ենթարկուողներէ կազմուած չըլլալն է, նկատելի պարագայ մըն է այն բացառութիւնը զոր ըրած է նախ թաղականութիւնը, երկրագործական կառավարութեան օրով նշանակուած նոյն կուսակցութեան պատկանող Եռանդամ հոգաբարձութեան, որուն ըստիպման և անուղղակի սպառնալիքին տաջև թէ անմիջապէս պաշտօնանկ ընել պիտի տան զիրենք, եթէ զպրոցին պէտք եղածին չափ չ'օժանդակեն, նախ թաղականութիւնը, իր աթոռներէն չ'զրկուելու համար, գրեթէ կրկնապատճիկ գումարներ նպաստ հատկացած է Եռանդամ Հոգաբարձութեան, ինչոր նախսկին ու ներկայ հոգաբարձութեանց օրով վարժարանին նպաստը աւելցունելու համար եղած դիմումներուն մերժումով պատասխանած է միշտ։

Նախ Թաղականութեան Ազգ վարժարանին հանդէպ բռնած այս խիստ դատապարտնելի վերաբերմունքին մասին ժամանակին Վառնայի հասարակութիւնը տեղեատկ պահուած ըլլալով մենք պիտի բռնականանք միայն հոգաբարձութեանց կողմէ նախ։ Թաղականութեան եղած դիմումներէն մէկ երկուքը ստորև հբատարակել, ինչպէս նաև նոյն թաղականութեան կողմէ հոգաբարձութեան ներքին գործերուն (կրթական) միջամուխ ըլլալու պարագան հաստաղող գրութիւններէն օրինակ մը ներկայացնել, որ կարելի ըլլայ գաղափար մը կազմել նախ։ Թաղականութեան տգիտութեան արդիւնք եղող իր բռնապետական-ադայական մասինութեան մասին Հոգաբարձութեան հանդէպ։

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
Վառնա Թիւ 222

19 Օգոստ, 1921

Պատ. Անդրամբ Հոգաբարձութեան Ազգ. երկու. վարժարանի  
ԱԱԾ

... Ներկայիւս պարտք կը համարենք կրկին Զեր լուրջ ու-  
շաղրութիւնը հրաւիրելու թէ հայ մանկացին դաստիարակութեան  
համար աջալուրջ հսկողութեան պարտականութիւնը ունենալով,  
ոչ մեկ պարագայի մեջ կամովին կը նրածարին անկէ, հետեւ-  
բար վարժարանի մասին ու է կարգագրութիւն և որոշում (օւսուց-  
ցական մարմայ ընտրութիւն եւայլն) ընելէ առաջ կը պահանջենք  
խորհրդուս կարծիքը նկատի ունենալ և անկէ յետոյ է որ թաղ.  
խորհրդուս եթէ համաձայնի իւր պիտաճէին ներած չափով տարե-  
կան 30000 լէվայով մասնակցին ազգ. վարժարանի պիտաճէին:

Մնանք յարգանօս

՚ի Դիմաց Թաղ. Խորդուոյ	Վահե Ասեղին
Ասեղնազարիքի՝	Վ. Ասեղնազետի
Ալեքսի ՄԱՆՈՒԿԵԱՆ	Տ. ՔիիրթձեԱն

ՀԱԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

ԱԶԳ. ԵՐԿՈ. ՎԱՐԺԱՐԱՆԻ  
Թիւ 284

13 Յունիոր 1922.

Պատ. Անդրամբ Թաղ. Խորհուրդոյ Ս. Սարգիս Եկեղեցւոյ  
ԱԱԾ

Կը հաստատենք մեր 17 Դեկտ. 1921 թուակիքը, որով խնդ-  
րած էինք... Զեր խոստացած ազգ. վարժ. արուելիք նպաստի  
յանձննումը շուտափոյթ կարգագրելու... Ներկայիս վերջին անդամ  
ըլլալով Զեր լուրջ նկատողութեան կը յանձնենք վարժարանիս  
նիւթական անել վիճակը (հիֆենորդ ամիսն և որ Վարժարանիս  
նոպասթ դադրեցւած է), որուն հետեւանքով մեր միակ կրթական  
հաստատութիւնը պիտի փակուի և 350 աշակերտներու փողոցները  
մնալը, ինչպէս նաև անկէ առաջ գալիք բոլոր պտտապիտանատու-  
ութիւնը թէ՛ պետական կրթական օրէնքի և թէ՛ հայ ազգի առ-  
ջև կը վայ Զեր վրայ:

Սպասելով այս մասին Զեր շուտափոյթ պատասխանին

՚ի Դիմաց Ազգ. Երկո. Վարժարանի

Հոգաբարձութեան

Ասեղնազարիքի	Ասեղնազետի
Յ. ԱմելիմեԱն	Ս. Գրիգորօֆ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ  
ԱԶԴ. ԵՐԿՍ. ՎԱՐԺԱՐԱՆԻ  
Թիւ 23

21 Օգոստ. 1923

Պատ. Անդրամբ Վատճայի Թաղական Խորհրդոյ

Ա.Ա.Տ

Հոգաբարձութիւնն նկատի ունեխալով որ Վարժարանի պաշտօնէութեան կը սկարտի 3—4 ամսական և թէ Վարժարանի զերաբացման համար անհրաժեշտ պէտքերը հոգալու համար նոյնպէս պէտք ունի առնուազն՝ 3—4000 լէվայի, իսկ իր գանձին մէջ ներկայիս և է գումար չունենալով, որոշեց կրկին զիմնել Խորհրդիդ խնդրելով որ համեմատ առաջին առթիւ հոգաբարձութեան արածողքի լուրջ գումար մը դոնէ առնեածագելի ծախսերը հոգալու վարժարանի վերաբացման առթիւ....

Այս առթիւ ամելորդ չենք նկատեր շեշտելու բէ և թէ մեզի չի արուի հարկ եղած նիւթական սմանդակութիւնը, Հոգաբարձութիւնս զերծ կը համարէ զինքը, ամէն պատասխանառութեան թէ ժողովաւրդին և թէ տեղական օրինաց առջև,

Սպասելով Զեր գրաւոր պատասխանին

Դ. Դիմաց Ազգ. Երկո. Վարժ. Հոգաբարձութեան

Առնեադպիր Առնեապիտ

Հ. Ա. ԳԵՐԳԵՐԵԱՆ Օ. ՔԱՅԱԶԱՑԷ

Եսա պարզ է որ նման դիտումներ անհետնանք մնալու դատապարտութիւն ու այսպէսն ախ. Թաղականութիւնը Ազգ. Վարժարանի հանդէպալ, ոչ միայն իր պարագանութիւնը չէ կատարած, ոյլ իր պաշտօնաւարութեան ամրող սնթացքին ներելի թէ անհերելի միջոցներով (իր պատկանած Ռամպազմար կուսակցութեան միջոցաւ քանից պայօթի ենթարկած Ազգ. Վարժարանը) այսպատճ է խաբանելու դպրոցի համար եղած թէ կառավարական և թէ ժողովրդական ամէն աշակցութիւն, երբ կարելի էր ու կրնար ամրոց առնուազն 10—12000 լէվայով նպաստել վարժարանին, ինչ որ հակառակ ամենազատ նիւթական պայմաններու մէջ իսկ, ներկայ թաղականութիւնը իր պանտանի կոչուելէն ի վեր կարողացաւ ընել.


ԵՌԱՆԴԱՄ ՅԱՆՉԱԺՈՂՈՎ


Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՎԱՌՆԱՑԻ

Վառնա

1924





[504]



ԳԻՒ Յ ԼԵՎԱ

ԳԱԱ Դիմեարակ Գիտ. Գրադ.



220061746